բաղետաց և իբրև մատուցու յընթերցումն թուղթ Նեոսի Պանփիւլացւոյ, գտեալ գրեալ զայն Արիոսական մոօք եւ օտար 'ի կաթուղիկէ Եկեղեցւոյ: Յեօթներորդ գումարման աւարտեալ զամենայն գործս ժողովոյն՝ նզովիւք հերքեցին զչարամիտ մոլորութիւնս պատկերամարտից, և հաստատեցին յարգել զպատկերս Փրկչին մերոյ և երանուհւոյ Մօր նորին և ամենայն սրբոց, սահմանեալ կանոնս 22 'ի բարեկարգութիւն Եկեղեցւոյ: Պատմ. Տէէլէ. Ժող. 469: Յայսմաւուր Հայոց 11 Հոկտեմբեր և 5 Դեկտեմբեր:

Յոյնք 'ի տարւոջ միանգամ յերկրորդ կիւրակէի քառասնորդական պահոց յԵրուսաղէմ 'ի տաճարին Ս. Յարութեան՝ մեծահանդէս թափօրիւ կատարեն զյիշատակութիւն ժողովոյս, ունելով 'ի ձեռին իւրաքանչիւր հանդիսական պատկերս փոքունս, և տան համբուրել զայնս ժողովրդոց առ հասարակ:

Յաւուրս կայսրութեան Կոստանդեայ եւ Երինեայ, նահատակեցաւ Նոր աբեղայն Բագոս յամիրայէ այլազգեաց՝ վասն 'ի Քրիստոս հաւատոյն յԵրուսաղէմ քաղաքի, զորոյ զմարմինն բարձեալ քրիստոնէից թաղեցին մերձ 'ի Սիոն. և տեղի գերեզմանի նորա կայ մնայ մինչեւ ցայսօր ժամանակի յարեւմտեան կողմն Ս. Փրկչի վանաց 'ի մէջ գերեզմանատան Հայոց, շրջապատեալ փոքր որմով, և է 'ի ձեռըս այլազգեացն Սիօնի, և ըստ բարբառոյ իւրեանց կոչեն զնա Շէյխ էլ-Մէնաէ: Արաբացիք այրեցին զՅովհաննէս Պատրիարգն 'ի տաճարին Ս. Յարութեան (969): Կայսրն Յունաց Յովհաննէս Զմշկիկ, որ և ասի Կիւրժան, դարձոյց զարշաւանս իւր յարեւելից դէպ յԱսորիս, անցեալ ընդ Դամասկոս և զԾովն Տիբերական՝ եմուտ 'ի Նազարէթ, եւ 'ի լեառն Թափոր, անտի էջ 'ի Կեսարիա Պաղեստինացւոց և եհաս մինչ 'ի Ռեմլէ, այլ ոչ կարաց ելանել յԵրուսաղէմ և ազատել զՍ. Տեղիս 'ի ձեռաց այլազգեաց, որպէս պատգամաւորօք խնդրէին բնակիչք քաղաքին, այլ դարձ արար անտի՝ յետ պատերազմին Եգիպտացւոց յաթոռ իւր 'ի Կոստանդնուպօլիս՝ տիրելով Ասորեաց և Փիւնիկեցւոց, որպէս է տեսանել 'ի թղթին զոր գրեաց առ թագաւորն Հայոց Աշոտ: Մատթ. Ուռհ. 23. (972):